



4. ԶԱՆԳԻՆ ՄԱՐԴՈՒ ՀԵՔԻԱԹ

Հարոն-հարոն զանգին, շա՛տ զանգին՝ մալ ու դովլըթի տեր մարդ կէղնի, ուներ իրեք տղա, էրկու աղջիկ ու կնիկ մե: Սաւանեն կալեր կապեր էր զէդ մարդ, նա՛ ինք կուտեր զուր մալ, նա՛ ուր կնիկ ճժուն կը կերցուցեր:

Յրերուց օր մե դաշտ կէրթա, կը տեսնա քանի մե անլուտի տղա՝ պզտիկ օձ մե շափռոններ ին, քար ու կոշտով, փետով կը զարկին, օր սպանին: Սիրտ կը ցավա, ամեկ տղին տաս փարա կիտա, զօձ կազատե, օձ կը փախնի կէրթա:

Օլոր օր էրկու մարդ գիկան կանին դուռ, կըսին.

— Մեր թագավոր դքրզի կը կանչե, քելի, էրթանք: Կնիկ կըսե.

— Մարդ, ես դինամ ոն է զքրզի կանչեր է, օր կռսն քրզի՝ չհուղե օր տամ», դու ըսե՝ «իմ մալն ընձի հալալ էրե, օր իմ կնիկ-ճժով ուտիմ, ուրիշ րամ՝ չըմ քուզի»:

Մարդ կէրթա. դուռ մե կը բացվի քառեջ, կը տեսնա թագավոր մե՝ նստուկ վըր թախտին:

Թագավոր կըսե.

— Հողածին, երեկ դու զիմ տղեն աղատեր իս ճժերու ձեռքեն, քուղե օր տամ:

— Թագավորն ապրած կենա, բան չըմ քուղի, մինակ իմ մալն ընձի հալալ էնիս, օր իմ կնիկ-ճժով ուտիմ:

— Ուրիշ բան չուղե, էդի ես չըմ կռնա իդա, քու մալ ու դովաթ իմ կնկա սարմիեն է, թե տալու էղնի, էնի կիտա,— կըսե թագավորը։
Մարդ կէրթա թագավորի կնկա մոտ։ Կնիկ կըսե։

— Քու մալ ու դովաթ իմ սարմիեն է, հազար տղա էղնի՝ չըմ իդա։

Թագավորի տղեն դիմնա զուր մամուռ ըսած, կը հեռուտի։

— Գեղնամ կէրթամ կորիմ, զիսի կսպանին, ինչ կէղնի թ'էղնի,— կըսե տղեն։

Ուր ջիգրու կսկծուն կը կանչե զուր տղեն, կըսե։

— Քու խաթրին՝ զքրզի ազատող մարդու մալն հալալ էրի ուրին, թ'էրթա ուր կնիկ-ճժով ուտին, խմին, հազնին, խպին, ուրախանան։

Մարդ կը դառնա գիկա տուն։ Հարի մկա լե կուտին զուրանց մալ ու դովաթ, խալըսել չկա։

